

«ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ»

Տ. ՇԱՏԵ ԱԲԵՂԱ ԱՆԱՆՅԱՆ

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ (ԻՆՔՆԱ)ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌ. Ը-Ի ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԵՒ ՆԱՐԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ԱՂԵՐՄՆԵՐԸ¹

Առակաց գրքի այս նշանավոր դրվագը դեռևս վաղ քրիստոնեության շրջանից մեծ հեղափոխության եւ հաճախ ծայրահեղության հասնող մեկնությունների տեղիք է տվել զանազան մեկնիչների երկերում: Պարումի նկարմամբ հեղափոխության աստիճանն իր գագաթնակետին է հասել արիոսական հերձվածի ի հայտ գալով, որի վերջնական դարապարտումը պայմանավորել է նաեւ Առ Ը-ի ուղղափառ ընթերցումը²: Սույն հոդվածի սահմաններում կփորձենք ուրվագծել Առ. Ը-ն իբրեւ աստվածաշնչային եւ հարակից գրականության մի մաս՝ անդրադառնալով հիմնականում Իմաստության գաղափարի ձևերի եւ արտահայտությունների դրսևորումներին:

Առ. Ը-ի հետ առավել սերտ աղերսներ ունեցող սուրբգրային պարումներն են՝ Իմաստ. Սող. Է 22-Ը 1, Իմաստ. Սիր. Ա եւ ԻԴ, Միք.Ե 1-3, Սղմ. ճԺ եւ ՆԲ³, Նոր ԺԵ եւ ԻԸ⁴, Բարութ Գ 9-Դ 4⁵, Ղուկ. ԺԱ 49-51=Մարթ. ԻԴ 34-36, Ղուկ. ԺԳ 34, Ա Կորնթ. Բ 7 շրնկ., Ը 6, Ժ 4, Փիլիպ. Բ 6-11, Կող. Ա 15⁶:

Նարակից գրական աղերսներից կարելի է առանձնացնել Ենոքի գրքի իմաստության կերպարը, Փիլոն Ալեքսանդրացու երկերից՝ *De ebraetate* 30-31 եւ *De virtutibus* 62⁷, եւ ռաբբինիստական գրականության մեջ հանդիպող Իմաստության կերպարը:

Ժամանակագրական եւ կանոնական հերթականությունը չխախտելու համար սկսենք սուրբգրային աղերսներից, որոնք իրենց կարեւորությամբ եւ ծավալով առաջնային տեղ են զբաղեցնում:

1 Առ. Ը-ի գրական կառուցվածքային առանձնահատկությունների մասին ավելի մանրամասն տե՛ս **A. Robert**, *Les attaches littéraires bibliques de Prov. 1-9, Extraits de la Revue Biblique* (Janvier, Avril, Juillet 1934, Juillet, Octobre 1935), p. 47:

2 Ամբողջական պարմությունն ու զարգացման ընթացքը տե՛ս **Manlio Simonetti**, *Studio sull'arianesimo, Verba Seniorum*, Roma, 1965, pp. 10-87:

3 Սույն դրվագի ընտրության համար տե՛ս **Schimanowski Gottfried**, *Weisheit und Messias*, Tübingen 1985, p. 38, **P. Beauchamp**, *Sagesse et Torah, Accomplissement et Folie* dans **R. Kuntzmann** (éd.), *Typologie biblique*, Paris (coll. *Lectio divina*, hors-série) 2002, p. 224:

4 **Wilhelm Schenke**, *Die Chokma (Sophia) in der jüdischen hypostasenspekulation*, Kristiania 1913, pp. 7-14.

5 Անդ, էջ 32-33:

6 **Schimanowski Gottfried**, նշվ. աշխ., էջ 309 շրնկ:

7 Փիլոն Ալեքսանդրացու երկերից մեջբերումները կատարվելու են ըստ հետևյալ հրատարակության՝ *De Ebrietate* 14-15, traduit par Jean Corez, Paris, Cerf (coll. *Les œuvres de Philon d'Alexandrie* 11-12) 1962, եւ *De Virtutibus*, introduction et notes de R. Arnaldez, traduction de P. Delobre, M.-R. Servel, A.-M. Verilhac, Paris, Cerf (coll. *Les œuvres de Philon d'Alexandrie* 26) 1962:

Սուրբգրային պատումներից կարելի է առանձնացնել երեք մեսիական մարգարեությունները՝ Միք. Ե 1-3, Սղմ. ԸԺ եւ ՂԲ: Նինկրակարանյան այս դրվագներում գլխավոր թեման նոր արքայի ծնունդն է եւ նրա թագավորության փարածումն ամբողջ աշխարհում: Անշուշտ, առաջին հայացքից վերոնշյալ հապվածների հարաբերությունն իմաստության կերպարի հետ կարող է այդքան էլ համոզիչ չթվալ: Սակայն մարգարեությունների մեջ առկա գլխավոր կերպարներն իրենց հատկությունների ամբողջությամբ կարող են մեզ խնդրի լուծման փարբերակներ առաջարկել: Խոսքը մասնավորապես Մեսիային եւ Իմաստությանը բնորոշ **գահակալման եւ նախագոյության** հատկանիշների մասին է: Նաշվի առնելով այս պատումների մեսիական բնույթը՝ փորձենք նախ հասկանալ դրանց կազմավորման եւ զարգացման ընթացքը, այնուհետեւ համեմատել իմաստության դրվագների հետ:

Միք. Ե 1-3 հայտնի հապվածը՝ մեջբերված Մտթ. Բ 6-ում, հերազա զարգացումների ընթացքին զգալի փոփոխությունների է ենթարկվել (Թարգում եւ Յոթանասնից, այսուհետ՝ Tg. եւ LXX)⁸: Այս առումով LXX-ի երկու հավելումները կարելի են եւ արժանի դիտարկման: Ե 2-ում՝ οἶκος թարգմանցի հավելումը, եւ ὁ π' ἀρχῆς՝ եբրայեցերեն 𐤀𐤒𐤊-ի թարգմանությունը⁹: Իրականում Միք. Ե 2-ի հունարեն փարբերակն ակնարկում է աշխարհի արարման սկիզբը¹⁰, մինչդեռ եբրայեցերեն բնագիրը (այսուհետ՝ TM) այնդքան էլ հստակ չէ, ինչ վերաբերում է աշխարհի արարման սկզբին. «...եւ աուրք նորա ի սկզբանէ, յաուրսն յառաջինսն»¹¹:

Tg.-ն իր հերթին թարգմանում է այս հապվածը՝ շեշտադրելով Մեսիայի անունը¹². «Եւ անուն նորա ի սկզբանէ արարման աշխարհի ... եւ ահա մեծ եղիցի անուն նորա մինչեւ ի ծագս երկրի»¹³:

TM-ում Միք. Ե 1-3-ը ներկայացնում է նոր թագավորության հաստատումը եւ նոր արքայի ծնունդն Իսրայելում: Միք. Դ 1-4-ում սկսված նոր թագավորության նկարագրումն այս հապվածում ավարտվում է¹⁴: Սակայն Միք. Ե 1-3-ը վերականգնված թագավորության առումով որոշակի հակասությունների եւ երկմտանքի փառք է փալիս: Նախ մարգարեության մեջ նշված քաղաքը Նրեաստանի ամենամեծը եւ ամենահայտնին չէ. այն «սակաւաւոր» է Նուդայի «հազարաւոր»-ների մեջ: Ընտրության այս փրամաբանությունը նորություն չէ աստվածաշնչյան հեղինակների համար. Աստված միշտ իր ժողովրդի թագավորներին ընտրում է թույլերի եւ ճնշվածների միջից (հմմտ. Դաւթ. Զ 15, Ա Թագ. Թ 21)¹⁵: Ըստ այսմ, կարող ենք խոսել վերականգնված թագավորության հոգեւոր բնույթի մասին, ինչպես որ այն առկա է Ես. ԺԱ 1-5-ում. «Եւ բղխեսցէ գաւազան յարմարոյն Յեսսեայ, եւ ելցէ ծաղիկ

8 G. Schimanowski, նշվ. աշխ., էջ 119-121:

9 Գրք.-ում՝ «եւ ելք նորա ի սկզբանէ աուրց աշխարհի»:

10 ὁ π' ἀρχῆς – ի օգտագործումը Ես. ԽԳ 12-ում ավելի է շեշտում արարահայտության *նախաարարչական* իմաստը:

11 Եբր.-ում՝ 𐤀𐤒𐤊 𐤌𐤓 𐤌𐤓 𐤀𐤒𐤊 Գտրերեն փարբերակը կարծես թարգմանել է LXX-ի հետեւողությամբ՝ , 𐤌𐤓 𐤌𐤓 𐤀𐤒𐤊 mēn rišito- ի սկզբանէ»՝ չնայած թարգմանության բավական ընդհանրացնող բնույթին:

12 G. Schimanowski, նշվ. աշխ., էջ 122.

13 Անդ, էջ 124-125:

14 Stū Delbert H. Hillers, *Micah*, Fortress Press, Philadelphia (coll. *Hermeneia*) 1984, էջ 65.

15 Անդ, էջ 66:

յարմարոյ անարի: Եւ հանգիցէ ի վերայ նորա Նոգի Աստուծոյ, հոգի իմաստութեան եւ հանճարոյ, հոգի խորհրդոյ եւ զօրութեան, հոգի գիտութեան եւ աստուածապաշտութեան. եւ 199է զնա հոգի երկիւղի Աստուծոյ: Ոչ ի կարծ դատեսցի, եւ ոչ ըստ խօսից յանդիմանեսցէ: Այլ արասցէ իրաւունս քնանկին, եւ յանդիմանեսցէ զխոնարհս երկրի, եւ հարցէ զերկիր բանի բերանոյ իւրոյ, եւ հոգւով շրթանց իւրոց սափակեսցէ զամպարիշտս: Եւ եղիցի արդարութիւն ամեալ ընդ մեջ իւր, եւ ճշմարտութեամբ պատեալ զկողս իւր»¹⁶:

Մնացած երկու մեսիական պատումները՝ Սղմ. ՆԲ (ՆԱ) եւ ՃԺ (ՃԹ), բավական մեծ թվով մեկնիչների ուշադրության առարկան են դարձել՝ շնորհիվ իրենց հունարեն թարգմանության: Սղմ. ՃԺ 3-ի հունարեն թարգմանությունը (LXX) արդեն քրիստոնեության արշալույսին մեջբերվել է փարբեր հեղինակների կողմից՝ իբրեւ քրիստոնեական Մեսիայի ծնունդն ավելորդ մարգարեություն(Մփթ. ԻԲ 44, Մրկ. ԺԲ 36, Գործք Առ. Բ 34, Ա Կորնթ. ԺԵ 25, Եբր. Ա 3), մինչդեռ TM-ում, ինչպես արդեն նկատել է փալիս Սաղմոսի համարեքսարը, խոսքը միայն Դավթի արքայական նվաճումների ավարտի մասին է¹⁷: Եբրայական բնագրի կերպարման այլընտրանքային փարբերակ¹⁸ ընտրելով՝ LXX-ը թարգմանում է. «Ընդ քեզ է սկիզբն աւուրց *զօրութեան* (հուն.՝ *δύναμις*), *ի վայելչութիւն սրբոց քոց* (ἐν ταῖς λαμπρότησιν τῶν ἁγίων) յարգանդէ *յառաջ քան զարուսեալ ծնայ զքեզ* (πρὸ ἐωσφόρου ἐξεγένησα σε)»: TM-ի հետ այս փեքսի պարզ համեմատությունն իսկ վերհանում է LXX-ի թարգմանական մեթոդի հոգետր բնույթը. «Ի բարձրացումն զօրաց քոյ ժողովուրդ քո յարիցէ ի վերայ լերանց սրբոց, յարգանդէ արուսեկին իջցէ ցող ի վերայ քոյ» (թրգմն. TM-ից)¹⁹:

Նոր մեսիական թագավորի նախագոյությունն ավելի շեշտված է Սղմ. ՆԲ (ՆԱ) 5, 17-ում: TM-ն ինքը Սղմ. ՆԲ (ՆԱ)-ում հստակորեն ներկայացնում է մեսիական թագավորի կերպարը՝ Սողոմոնի հետ հարաբերության մեջ դնելով նրան²⁰: Եբրայական բնագիրը մասնավոր կերպով շեշտում է Սաղմոսի արքայական բնույթը: Այս երեւոյթը բացատրվում է Սղմ. Բ-ի հետ ունեցած սերտ աղերսներով: Իրականում Սղմ. Բ-ն Սղմ. ՆԲ (ՆԱ)-ի համար նախաբանի դեր է կատարում²¹: Այսպիսով, TM-ն, հաշվի առնելով Սաղմոսի ծիսական համարեքսարը, հետեւյալ կերպ է արտահայտում իմասարը.

16 Ըստ Schimanowski-ու, Եսայու այս հատվածը հանճարեղ մի ձեռնարկ էր «արքայական պատումները» (*Königsvorstellung*) «մեսիական պատումների» (*Messiasvorstellung*) հետ կապելու համար: Նին Արեւելքում եւ Իսրայելում թագավորների աստվածացման երեւոյթի մասին փնս Abraham Heschel, *The Prophets*, vol. II, New York, 1955:

17 Տնս P. Beauchamp, *Le Psautier* (Ps. 73-150), Paris (coll. *Sources Bibliques*), Gabalda 1979, էջ 189.

18 Եբրայեցերեն բնագրի վերադասավորումն ըստ հունարեն թարգմանության իրականացվել է մի շարք հեղինակների կողմից. հմմտ. G. Schimanowski, նշվ. աշխ., էջ 139; P. M.-J. Lagrange, *Le Messianisme chez les juifs*, Paris 1909, էջ 47; H. B. Swete, *An Introduction to the Old Testament in Greek*, Cambridge University Press 1914², էջ 336:

19 Վաղ եկեղեցու ամենաառաջին ջարագովներից Նուսրինոս Վկան, Սաղմոսիս առաջին բառերը մեջբերելով, գրում է Տրիփոն անունով հրեա իմաստունին. «... ձեր վարդապետները համարձակվում են այն (Սղմ. ՃԹ/ՃԺ) մեկնաբանել եւ վերագրել Եզեկիային, կարծես վերջինս հրաման ստացած լիներ Տաճարի աջ կողմում նստելու ... սակայն ինքնին պարզ է, որ այդ Սաղմոսը Եզեկիայի մասին չի խոսում» (Dial. 63,3): Նուսրինոսի վստահությունը գալիս է Սաղմոսի հունարեն թարգմանությունից, որը նա ամբողջությամբ մեջբերում է: Իր «Երկխոսության» մի այլ մասում (45, 4) Նուսրինոսը շեշտում է ἐωσφόρος բառը՝ իբրեւ Քրիստոսի մակդիրներից մեկը (փնս Justin, *Dialogues avec Tryphon*, texte grec, traduction, introduction et notes par Georgess Archimbault, Paris 1909, vol. I-II):

20 Տնս P. Beauchamp, նշվ. աշխ., էջ 299:

21 Անդ:

«5, Ընդ արեւու եւ ընդ լուսնի եղիցի յազգէ մինչեւ յազգ,

...17, Օրհնեալ անուն նորա յաիսրեան, ընդ արեւու եղիցի անուն նորա:

Ամենայն ազգք օրհնեացին յանուն նորա, ամենայն հեթանոսք երանիցեն նմա»:

LXX-ն շեշտում է Մեսիայի նախագոյությունն ու անձնավորումը (իմա Անունը)²²: Մեսիայի անվան այս առանձնահատուկ շեշտադրումը, այս վերջինիս նույնացնելով Թագավորի Որդու հետ, վկայված է նաեւ Tg²³.-ում: Նաբկանշական եւ Սողոմոնի մասին գրված առաջին տողերը (հմմտ. Սղմ. ՆԲ 1). «Սողոմոնի մարգարեական ձեռքը գրեց այս, Ո՛վ Աստված, քո դատաստանը **Թագավոր Մեսիային** տուր (TM, թագավոր), եւ քո արդարությունը **Դավիթ թագավորի որդուն** (TM, թագավորի որդուն)»²⁴:

Երկիմաստությունը²⁵, որով բնորոշվում է Իմաստությունն իբրեւ միաժամանակ նախագո եւ հայրնված հասկացություն²⁶, առկա է նաեւ Յոբ ԺԵ 7-ում եւ ԻԸ-ում²⁷: Նարկ է նշել, որ Յոբ ԺԵ 7-ն իր ճարտասանական հարցերով հիշեցնում է Առ. Ը 25-ը²⁸: Յոբ ԻԸ-ն բացահայտում է մի այլ իմաստություն, որը «հասնում է մինչեւ այն հնագույն ժամանակաշրջանը, երբ Աստված սահմանեց արարչության ամենախորհրդավոր արարածների կարգը»²⁹: Պետք է, սակայն, նշել, որ Իմաստության նախնականությունը՝ արարչության հետ համեմատված, ավելի նկատելի է TM-ում քան LXX-ում³⁰: Իմաստության երկակի բնույթը պայմանավորում է նաեւ այս պոեմի երկիմաստությունը: Մարդն իր մտավոր սահմանափակությամբ անկարող է այն գտնելու: Միայն Աստված գիտե, թե ո՞րպեղ կարելի է գտնել Իմաստությունը, որովհետեւ վերջինս «Էլոհիմի հայացքի եւ մտքի առարկան է»³¹: Այնուամենայնիվ, Իմաստությունն աշխարհի կարգի (Naturordnung) պատասխանատուն է, այն ինքն իրեն հայտնում է արարչության մեջ³²: Իմաստության ճանապարհին հետամուտ լինելով կարելի է հասնել Աստված փանող ճանապարհին: Մարդու մեղքի պատճառով է, որ Իմաստությունը լքում է մարդուն: Գրքի հեղինակը, եթե կարելի է այդպես արտահայտվել, ներշնչվել է Յոբի գրքում գերիշխող մի երեւոյթից՝ աստվածաարդարացումից (theodicy)³³:

22 Տե՛ս G. Schimanowski, նշվ. աշխ., էջ 147:

23 Մեսիայի նախագոյության այս գաղափարը, որ փոխանցվել է Քրիստոսի կերպարին Նոր Կտակարանում, ներշնչող ազդեցություն է ունեցել Վաղ եկեղեցու աստվածաբանների եւ ջապագովների վրա: Կղեմնես Ալեքսանդրացին (*Excerpta ex Theodoto* 20, 113, 15-17) եւ Իրինեոս Լուզոնացին (*Demonstratio* 43) մեջբերում են ԺԺ եւ ՆԲ Սաղմոսները:

24 G. Schimanowski, նշվ. աշխ., էջ 149:

25 Տե՛ս P. Beauchamp, «Sagesse et Torah», էջ 232-235:

26 Նինկարակարանյան Իմաստությունը՝ որպես անձնավորված հասկացություն կամ հիպոստաս/առանձնավորություն, կրոնների պատմության մեջ սահմանվել է իբրեւ «կիսաինքնավար մի էություն, աստվածության հայրնության մի ձեւ, որը ներկայացնում է տվյալ աստվածության որեւէ հատկությունը, գործողությունը, անդամը եւն» (G. von Rad, *Israel et la Sagesse*, էջ 173):

27 Ընդհանրապես ուսումնասիրողների կողմից ընդունված տեսակետն է, որ Յոբ ԻԸ-ն հեթանոսության շրջանի հավելում է. տե՛ս Jean Lévêque, *Job ou le drame de la foi*, Paris (coll. *Lectio Divina* 216), էջ 81:

28 Տե՛ս W. Schenke, նշվ. աշխ., էջ 8:

29 G. von Rad, նշվ. աշխ., էջ 172:

30 Յոբ ԻԸ 14-19-ը պակասում է LXX-ում: 14-րդ տողը թերեւս պոեմի ամենաբանաստեղծական հատվածն է. «Անդունդն (𐤁𐤓𐤕𐤕) ասաց. «Ես այն չունեմ», իսկ Ծովը (𐤁𐤕) բացականչեց՝ «Այն ինձ մութ չէ»:

31 Jean Lévêque, նշվ. աշխ., էջ 216:

32 W. Schenke, նշվ. աշխ., էջ 12:

33 Տե՛ս K.-J. Illman, «Theodicy in Job» in Antti Laato, Johannes C. de Moor (ed.), *Theodicy in the World of the*

Նորի ԻԸ-ում Իմաստության տեղակայման թեման իբրեւ իմաստային զուգահեռ է ունի Բարուք Գ 9-Դ 4-ը³⁴: Վերջինս օգտագործում է ինչպես Յոր ԻԸ-ից որոշ հապավածներ (Բար. Գ 31/Յոր ԻԸ 13), այնպես էլ Երկրորդումն Օրինաց գրքից (Բար. Գ 29-30/Երկր. Օր. Լ 12-13)³⁵: Սակայն Բարուքի գրքում Իմաստության նախագոյության հարցն այդքան էլ կարծես կարեւոր չէ: Եթե Յոր ԻԸ-ում խոսվում է ընդհանրապես մարդու եւ փեղեկական Իմաստության մասին, ապա Բար. Գ 9-Դ4-ում որակներն ավելի հապկանշված են³⁶, որով Բարուքի գիրքը կարող է դասվել ջափագովական երկերի շարքին³⁷: Երկրորդումն Օրինացից քաղված հապավածներն «անհետացնում» են Նորի գրքի՝ փեղեկական Իմաստությանը վերաբերող դրվագները, այսինքն՝ արդյունքում Իսրայելին ժառանգություն հասած Իմաստությունը, ըստ Բարուքի գրքի, Օրենքն է (հմմտ. Բար. Դ 1-4): Ահա թե ինչու Բարուքի գրքում Իմաստության նախագոյության գաղափարն առաջնային տեղում չէ, ինչպես որ է Յոր ԻԸ-ում: Դեպի Իմաստություն փանդող ճանապարհը նախապեսված է միայն նրանց համար, ովքեր փնտրում են Օրենքն ու Աստծուն: Այս առումով, Գ գլխի 36-38 տողերը³⁸ նշանակալից են. միայն Իսրայելի Տեր Աստվածն ունի իմաստություն, որովհետեւ, Թորայի՝ Օրենքի հետ իր նույնացմամբ, Իմաստությունն ինքնըստինքյան մերձ է Աստծուն: Իմաստության եւ Օրենքի նույնացման գաղափարի գրական շեշտով Բարուքի գրքի այս դրվագը սերտ աղերսներ ունի սուրբգրային մյուս երկու պատումների հետ՝ Սիրաք Ա եւ ԻԴ: Այս դրվագներում արդեն Իմաստության տեղադրումն ու բնույթն ավելի պարզ եւ հասկանալի շարադրանքով են ներկայացվում: Ըստ այսմ, Իմաստությունը բնակվում է երկնքում ու Իսրայելում եւ դուրս է եկել Աստծո բերանից (Սիր. ԻԴ 3, 8)³⁹: Ընդհանրապես, այս երկու պատումների բացահայտ նմանությունն Առ. Ը-ի հետ բազմիցս ընդգծվել է մեկնիչների կողմից: Սիրաքի գրքի հեղինակը ոչ միայն փոխառել է Առ. Ը-ի գրական կառուցվածքի առանձնահատկությունները (22 կիսատողեր), այլ նաեւ «մեծ հավասարումը»՝ Աստծո երկյուղ=Իմաստություն=Տիրոջ շնորհներ=կարգուկանոն=աստվածային պարգամների իրագործումը կյանքում (Սիր. Ա 25-27): Ըստ Սիր. ԻԴ 23-ի նախագո Իմաստությունը եւ նրա խոսքերը համապատասխանում են Օրենքին: Իրականում, սակայն, Սիրաքը փորձում է երկու մեծ սուրբգրային ավանդությունների՝ իմաստունների եւ երկրորդօրինական (*deutéronomiste*) դպրոցների միջեւ տեղադրել Իմաստությունը⁴⁰: Իմաստունները ջանում են մարդուն տեղադրել մի փեղեկքում, որտեղ ի սկզբանե հաստատված է հասարակական կարգը՝ Իմաստությունը: Այս առումով իմաստունները կրկնում են այն, ինչ նրանց սովորեցրել է Աստվածային հայրնությունը: Սակայն Սիրաքի գրքի համաձայն Իսրայելի Աստծո

Bible, Brill, Leiden-Boston 2003, էջ 304:

34 W. Schenke, նշվ. աշխ., էջ 32:

35 *La Bible d'Alexandrie, LXX 25. 2 Baruch, Lamentations, Lettre de Jérémie*, trad. du texte grec de la Septante, Introduction et notes par Isabelle Assan-Dhôte et Jacqueline Moatti-Fine, Paris (Cerf) 2005, էջ 67:

36 Տե՛ս André Kabasele Mukenge, *L'unité littéraire du livre de Baruch*, Paris (coll. *Études Bibliques* 38), Gabalda 1998, էջ 262:

37 Անդ:

38 Սույն դրվագն արժանացել է Եկեղեցու հայրերի մասնավոր ուշադրությանը. նրանք 38-րդ տողի մեջ տեսել են Քրիստոսի մարդկության նախօրինակը. «Յեւ այսօրիկ (Իմաստութիւն) յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ» (հմմտ. André Kabasele Mukenge, նշվ. աշխ., էջ 39):

39 Տե՛ս M. Gilbert, *L'éloge de la Sagesse*, *Revue Théologique de Louvain* 5 (1974), էջ 341:

40 Տե՛ս M. Gilbert, նշվ. աշխ., էջ 346:

պարվիրաններն իրական եւ անաղարտ Իմաստությունն են ներկայացնում՝ ավելի բարձր քան մնացած ազգերի իմաստությունները (հմմտ. Երկր. Օր. Դ 6-8/Սիր. ԻԴ 25-26): Այս մոտեցումը հիմնավորելու համար Սիրաքը շեշտում է Իմաստության ծիսական առանձնահատկությունը (ԻԴ 23)⁴¹, ինչն իր նախընթացը չունի մնացած իմաստասիրական պոեմներում: Այսպիսով, Սիր. Ա 1-10-ում գրքի՝ նախագո Իմաստությունն արարչության մեջ դիտարկող նախաբանը (Ա 4-8) պետք է ընթերցվի Երկր. Օր. ԻԴ պարումի ծիսական եւ օրինադրական ծիրից ներս: Ավելի հստակեցնելու համար ասվածի միտք բանին՝ մեջբերենք Մ. Ժիլբերի խոսքերը. «Պարահական չէ, թերեւս, որ Սիր. ԻԴ 3-ն աննուղակիորեն առնչվում է Ծննդ. Ա 1-3-ի հետ, մինչդեռ Սիր. ԻԴ 23-ը մեջբերում է Երկր. Օր. ԻԳ 4-ը: Ներքաբար, Սիր. ԻԴ 3-6-ը հիշեցնում է Կիեզերական ակունքների պարմությունը, իսկ Սիր. ԻԴ 7-8-ը՝ Իսրայելի ընտրությունը: Սիր. ԻԴ 10-12-ը, մեջբերելով Երկր. Օրինաց գրքից որոշ հարվածներ, ընդգծում է պաշտամունքի կարեւորությունը, մինչդեռ խոնկի եւ անուշահոտ յուղերի նկարագրությունն ուղղակի հղում է Ելից գրքին:

Միայն թե Սիրաքն այս ամենը գրանցում է Իմաստության հաշվին, եւ պարզ է դառնում, որ նա ավելի շատ հիանում է Իմաստության կերպարով, քան Օրենքով⁴²»:

Աստվածաշնչյան իմաստության վերացարկումն ու փիլիսոփայական անձնավորումը վկայված են նաեւ մեկ այլ սուրբգրային պարումով՝ Իմաստ. Սող. Զ-Թ: Վերջին շրջանի ուսումնասիրողներն այս գրքի հեղինակին նույնացրել են Ալեքսանդրիայի հրեա փիլիսոփաներից մեկի՝ Ք. ա. Բ դարում ապրած Արիստոբուլոսի հետ⁴³: Վերջինս հեղինակել է նաեւ մովսիսական օրենքին նվիրված մի մեկնաբանական երկ՝ ձոնված Պարղոմեոս Դ Ֆիլոմետոր թագավորին (Ք. ա. 181-146 թթ.)⁴⁴: Մեզ հեղաբերքող հարվածը պահպանվել է Եսեբիոս Կեսարացու «Պարաստութիւնք աւերարանականք» երկում (XIII, 12, 1-3)⁴⁵: Եսեբիոս Կեսարացին, ի դեմս Արիստոբուլոսի, ներկայացնում է ճեմական մի փիլիսոփայի, ըստ որի Իմաստությունը նման է «լուսավոր ջահի»⁴⁶: Առաջին օրվա Իմաստության նույնացումը վերջին օրվա Իմաստության հետ արդյունք է Արիստոբուլոսի՝ ճեմական փիլիսոփայությունից ազդված լինելու⁴⁷: Յոթնակի Իմաստությունը (*siebenfache Logos*) աշխարհի կարգն է, որովհետեւ աշխարհը հղացվել եւ իր արարման ավարտին է հասել միայն ու միայն Իմաստության շնորհիվ: Նա ճշմարիտ գիտության աղբյուր է մարդկանց

41 Խորհրդանշական է հարկապես ծիսական ընթերցման մեջ կիրառվող «հիշողություն» հասկացությունը՝ (հմմտ. M. Gilbert, նշվ. աշխ., էջ 334):

42 M. Gilbert, նշվ. աշխ., էջ 345-346:

43 G. Schimanowski, նշվ. աշխ., էջ 70-71: Նույնաշխելլենիստական շրջանակներում զարգացած փիլիսոփայական պրպարումների մասին ավելի մանրամասն տես B. L. Mack, *Logos und Sophia. Untersuchungen zur Weisheitstheologie in hellenistischen Judentum*, Göttingen, 1973:

44 Տե՛ս Gilles Dorival et al., *La Bible grecque des Septante*, Cerf, Paris 1988, էջ 45:

45 SC 307, livres XII-XIII, introduction, texte grec, traduction et annotation par Edouard des Places, Paris (Cerf), 1983.

46 Անդ, էջ 321: Ըստ D. Hamonville-ի, Արիստոբուլոսն է երբայեցներնից հունարենի թարգմանել «Առակաց գիրքը». Արիստոբուլոսը նշում է, որ ճեմականների ուսմունքի համաձայն Իմաստությունը ձուլվել է լուսավոր ջահի հետ. Նա հեղաբար առաջին օրվա լույսն է, որը նույնական է յոթերորդ՝ վերջին օրվա լույսի հետ... Նշենք, որ «ջահ» *lamptēr* բառն Առակաց գրքի հունարեն թարգմանության մեջ հայտնվում է յոթնիցս, մինչդեռ LXX-ի մնացած գրքերում այն իսպառ բացակայում է» (*La Bible d'Alexandrie; Les Proverbes*, traduction du texte grec de la Septante, introduction et notes par David Marc d'Hamonville, Cerf, Paris 2000, p. 45):

47 Տե՛ս G. Schimanowski, նշվ. աշխ., էջ 72:

համար եւ աշխարհի կառուցվածքի աստվածային սկզբունքը⁴⁸: Իր փիլիսոփայական վերլուծություններում Արիստոբոլոսը մեծ հետաքրքրություն է հանդես բերում Առ. Ը-ի նկարմամբ. հաջորդաբար շոշափվող թեմաներին անդրադարձը կատարվում է Սողոմոնի համբավի հիմքի վրա՝ արարչագործության վերաբերյալ սուրբգրային պատումները հարմարեցնելով հելլենիստական փիլիսոփայության գաղափարներին: Սողոմոնի Իմաստության գրքից քաղված դրվագը (Զ-Թ) հարկանշական է երկու հիմնական թեմաներով՝ Իմաստության ակունքը եւ նրա խորհուրդն արարչության հետ ունեցած կապերի մեջ⁴⁹:

Առաջին հատվածը՝ Է 22 - Ը 1 Իմաստության նկարագրությունն է: Նախկանշական է, որ հենց առաջին փողերից հեղինակը հղում է Իմաստության գերբնական ծնունդին՝ «ἐστὶν γὰρ ἐν αὐτῇ -գի գոյ ի նմա»⁵⁰: Այս ներբողը զարգանում է ստոյիկյան փիլիսոփայությունից քաղված փարբեր մակդիրներով ու որակումներով, որոնց թվային կառուցվածքն է 7/3, այսինքն՝ Է 22-28 յոթամասնյա հատվածում յուրաքանչյուր փող հաշվում է երեքական մակդիր: Նմանափայ փիլիսոփայական-գրական կառուցվածքներ լայնորեն շրջանառվել են հունական փիլիսոփայության մեջ, ինչպես նաեւ Նին Արեւելքի կրոնական համակարգերում, որոնք մեծապես ազդված էին հելլենիզմից⁵¹: Այս դրվագն էլ, խորապես ներշնչված ստոյիկյան փիլիսոփայական համակարգերից, նույնացնում է «հոգին» Իմաստության հետ՝ վերջինիս ընկալելով աշխարհում՝ իբրեւ «լույս արարչության»⁵²: Եթե Սիր. ԻԴ 3-ում Իմաստությունն արտաբերվում է Բարձրյալի բերանից, ապա հրեա փիլիսոփայի այս մոտեցումն Իմաստության գրքում ավելի շուր ստոյիկյան պնեւմայի համադրումն է Բարձրյալի շնչի հետ⁵³: Այսպիսով Իմաստության **ոգեղենացումը** (spiritualisation) Իմաստ. Է 27-ում աղերսվում է ներշնչման երեւոյթին՝ ճեմական փիլիսոփայության մեկ այլ կարեւոր կողմերից մեկը⁵⁴: Ներշնչված անձինք Տիրոջ մարերիմներն են, մարդիկ, ովքեր սիրում են Իմաստությունը եւ մաքուր սիրտ ունեն. թեմա, որ շատ փարածված է Նին Կտակարանում եւ հելլենիստական գրականության մեջ⁵⁵: Մարդկանց հետ ընկերություն անելու այս գաղափարը, ըստ այսմ, Իմաստության ամենակարեւոր նախաձեռնություններից մեկն է այս

48 Տե՛ս անդ:

49 Անդ, էջ 75:

50 Անդ:

51 Նմանափայ աղոթք-ներբողներ շատ փարածված էին Միթրա չասրծուն նվիրված պատարագներում, արեւի չասրծո պաշտամունքի մեջ, որին սերտորեն կապված էր նաեւ Իսիս չասրվածուհու անվան սինկրետիկ պաշտամունքային համակարգը: Նմանափայ կառուցվածքներով ներբողներ, ըստ ռաբբինիստական մեկնությունների, կարելի է գտնել, օրինակ, Երկր. Օր. ԼԲ 1-ում եւ Ես. Զ 3-ում. հմմտ. Skehan W. Patrick, Di Lella A. Alexander, *The Wisdom of Ben Sira, A New Translation with Notes, Introduction and Commentary*, AB 39, 1987, էջ 179:

52 G. Schimanowski, նշվ. աշխ., էջ 75:

53 Փիլոն Ալեքսանդրացին, հույն փիլիսոփաների հետևողությամբ, Իմաստությունը նկարագրելու համար կիրառում է πολωνυμος եզրույթը (*Legum alegoriae* I 43): Ստոյիկյան փիլիսոփա Պոսիդոնիսն իր հերթին Ասրծուն անվանում է πνεῦμα νοερόν, հմմտ. Skehan W. Patrick, Di Lella A. Alexander, նշվ. աշխ., էջ 180:

54 Տե՛ս հատկապես Իմաստության նմանությունները՝ ψυχὰς ὁσίας – ոգիք սուրբք՝ հասկացության հետ: Ըստ C. Larcher-ի ստոյիկյան փիլիսոփայության մեջ «νοερόν մակդիրը բնութագրում է Ոգու, Շնչի ամենաբարձր, հոգևոր վիճակը: Նա կարող է վերաբերել առաջին հերթին փիեզերական Ոգուն կամ Պնեւմային, այնուհետև՝ հոգուն, արեւին կամ աստղերին, որովհետև նյութի ամենաբարձր, ամենաանբերային, ամենանորբ վիճակը միավոր օրգաններն են» (*Le livre de la Sagesse ou la Sagesse de Salomon II*, Paris (coll. *Études Bibliques*, nouvelle série n°3), Gabalda 1984, p. 482):

55 Տե՛ս անդ, էջ 508-512:

աշխարհում: Այս իմաստով, Իմաստության գրքի հեղինակը հաճախակի է անդրադառնում Առ. Ը-ին: Իմաստությունը, փռված ու փարածված լինելով ամբողջ աշխարհում, հասանելի է մաքուր սիրտ եւ հոգեւոր իմաստություն ունեցող ցանկացած մարդու⁵⁶:

Իմաստ. Է 26, 29-30 դրվագները պարմում են արարչության Լույսի մասին: Նին Կրակարանում լույսն Աստծո ստորոգելիներից մեկն է (Ես. Կ 1, Ամբ. Գ 4, Դան. Բ 22), բայց ոչ մի րեղ չի նշվում, թե՛ «Աստված լույս է»: Նրեականության երկու մեծ ճյուղերի՝ պաղեստինյանի եւ ալեքսանդրյանի միջեւ փարբերությունն այս առումով Աստծուն իբրեւ հոգեւոր լույս ընկալելու գաղափարն է⁵⁷: Իմաստության գրքի հեղինակը զարգացնում է լուսավոր Իմաստության այս գաղափարը եւ հաջորդիվ (Է 29-30) համեմատում Նրան արեւի, աստղերի եւ գիշերվա հետ՝ ընդգծելով Իմաստության գերազանցությունն առ ի համեմատություն արարչության: Ավելին, եթե Սիր. ԻԴ-ում Իմաստության արարչագործական գործությունն այդքան էլ պարզ չէ⁵⁸, ապա այսպեղ Իմաստությունը, իրականացնելով իր ողջ արարչագործական ծրագիրը, մնում է անփոփոխ, այլ կերպ ասած՝ «ինքն իրենից դուրս չի գալիս»⁵⁹:

(շարունակելի)

56 Տե՛ս անդ, էջ 508:

57 Տե՛ս անդ, էջ 502:

58 Խոսքը մասնավորապես **M. Gilbert**-ի այն ենթադրության մասին է (նշվ. աշխ., էջ 343), ըստ որի Սիր. ԻԴ-ում Իմաստությունն արարած է, եւ ոչ թե արարչագործ:

59 **C. Larcher**, նշվ. աշխ., էջ 507: